

## ԱՐՏԱԻԱԶԴԻ Գ. ԱՐՏԱՇԷՍԵԱՆԻ ԴՐԱՄԱՀԱՏՈՒԹԻՒՆԸ

ԱՍՊԵՏ Թ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

Հայաստանի Արտաշեսեան Հարստութիւնը, որ տեւած է շուրջ երկու դարեր (Ք.Ա. 189-Ք.Ե. 6? թթ.), ունի համանուն թագաւորներու շարք մը: Այսպէս՝ Հարստութիւնը կը հաշուէ հինգ Տիգրաններ՝ —Տիրան-Տիգրան Ա. (Ք.Ա. 123-95 թթ.), Տիգրան Բ. (Ք.Ա. 95-56 թթ.), Տիգրան Գ. (Ք.Ա. 20-8/6 թթ.), Տիգրան Դ. (Ք.Ա. 8-5 եւ Ք.Ա. 2-Ք.Ե. 1 թթ.) ու Տիգրան Ե. (Ք.Ե. 6-? թթ.), չորս Արտաւազդներ՝ —Արտաւազդ Ա. (Ք.Ա. 160-123 թթ.), Արտաւազդ Բ. (Ք.Ա. 56-34 թթ.), Արտաւազդ Գ. (Ք.Ա. 5-2 թթ.), եւ Արտաւազդ Դ. (Ք.Ե. 4-6 թթ.), եւ երկու Արտաշէսներ՝ —Արտաշէս Ա. (Ք.Ա. 189-160 թթ.) եւ Արտաշէս Բ. (Ք.Ա. 30-20 թթ.):

Վերոյիշեալ իրողութիւնը յաճախ դժուարութիւններ կը յարուցանէ զատորոշելու նոյնանուն արքաները իրարմէ՝ պատմութեան մէջ, իսկ երբեմն անել կացութեան կը մատնէ դրամագէտը, երբ ան կը փորձէ որոշ դրամ մը վերագրել համանուն գահակալներէն մէկուն կամ միւսին:

Ցարդ ոչ մէկ դրամ գոյութիւն ունի, զոր կարելի ըլլայ վստահօրէն վերագրել Արտաշէսեան Հարստութեան հիմնադիր՝ Արտաշէս Ա.ի: Նոյնն է պարագան Արտաւազդ Ա.ի համար: Թէեւ աւելի քան տասնամեակ մը առաջ պղինձ դրամ մը վերագրած էինք Արտաշէս Ա.ի (Տես՝ նկար թիւ 1), եւ որուն հաւանական երկրորդ կարելիութիւն նկատած էինք անոր Արտաւազդ Ա.ի պատկանած ըլլալը<sup>1</sup>, այսօր վերոյիշեալ երկու վերագրումներն ալ անընդունելի կը նկատենք:

1. Տես՝ Ասպետ Թ. Տօնապետեան, Արտաշէսեան Հարստութեան Հիմնադիր՝ Արտաշէս Ա.ի Պղինձ Դրամը, «Հայկագեան Հայագիտական Հանդէս», [Բ. հտր.], Պէյրուս, 1971, էջ 135-143:

Խնդրոյ առարկայ դրամին կշիռն է 4.0 կրամ, տրամագիծը՝ 1.6 սմ.:

Նկարագրութիւնը՝

Ա. երես.— Արքային գլուխը աջ դարձած՝ հնգածայր, հայկական խոյրով, երկար կզակով, ցած քիթով եւ կարճ մօրուքով:

Բ. երես.— Հոս բոլորովին նոր պատկերատիպի մը կը հանդիպինք, որ արտաշէսեան այլ դրամներու վրայ չի տեսնուիր. — խոչոր արծիւ մը ձախ դարձած՝ թառած ցից լեռան մը գագաթը: Աջին, դէպի վար՝ ΒΑΣΙΛΕΩΣ / ΜΕΓΑΛΟΥ; ձախին, դէպի վար՝ ΑΡΤΑ... , այսինքն՝ «Արքայ Մեծ Արտա...»:

Մակագրութեան այն մասը, որ սովորաբար գահակալին անունը կը պարունակէ, մասամբ կորկով ծածկուած ըլլալով, ընթեռնելի չէր: Հետեւաբար, զայն վերծանած էինք որպէս ΑΡΤΑΞΙΟΥ (Արտաշէսի): Քանի որ Արտաշէս եւ Արտաւազդ անունները կը սկսին թէ՛ նոյն չորս տառերով եւ թէ՛ նոյն յաջորդականութեամբ, որ է՝ «Արտա...», հետեւաբար, որպէս երկրորդ, հաւանական կարելիութիւն, թելադրած էինք մակագրութիւնը նաեւ վերծանել որպէս ΑΡΤΑΥΑΖΔΟΥ (Արտաւազդայ): Ամփոփելով՝ ըստ մեր վերծանումին, այս դրամը պէտք է պատկանէր կամ Արտաշէս Ա.ի եւ կամ՝ անոր զաւկին ու յաջորդին՝ Արտաւազդ Ա.ի:

Վերոյիշեալ յօդուածին հրատարակուելէն տասնեակ մը տարիներ ետք, նոյն դրամէն չորս տարբերակներ ստացանք<sup>2</sup>, որոնք ցոյց տուին որ խնդրոյ առարկայ դրամին մակագրութիւնը Արտաշէս չէ, այլ՝ Արտաւազդ, ինչ որ մենք որպէս երկրորդ հաւանական վերծանում թելադրած էինք: Աւելին՝ երբ նախկին դրամին վրայի կորկը թեթեւօրէն մաքրեցինք, պարզուեցաւ որ մակագրութիւնը՝ միւս չորս տարբերակներուն նման, «Արտաւազդ» է: Այս հինգ դրամները ոչ միայն լոյս սփռեցին գահակալին անունը վերծանելու, այլ եւ՝ պատճառ եղան որ պահ մը տարբեր մտածենք մեր վերագրումին մասին: Այս վերծանումը այժմ նոր հարց կը յառաջադրէ. այս հինգ դրամները համանուն չորս Արտաւազդներէն ո՞ր մէկուն կարելի է վերագրել: Եթէ այս դրամները բաղդատենք Տիրան-Տիգրան Ա.ի դրամներուն հետ (տես՝ նկար թիւ 2: Ներկայացուած դրամին կշիռն է՝ 5.07 կր., տրամագիծը՝ 1.75 սմ.), իսկոյն պիտի նկատենք որ Տիգրան Ա.ի դրամներուն արուեստը շատ

2. Տես՝ նկար թիւ 8-11: Ներկայացուած դրամներուն կշիռն ու տրամագիծը՝

Նկ. 8— կշիռ՝ 3.30 կր., տրամագիծ՝ 1.50 սմ.

Նկ. 9— կշիռ՝ 3.70 կր., տրամագիծ՝ 1.50 սմ.

Նկ. 10— կշիռ՝ 4.00 կր., տրամագիծ՝ 1.70 սմ.

Նկ. 11— կշիռ՝ 4.90 կր., տրամագիծ՝ 1.60 սմ.:

աւելի նախնական եւ բարբարոս է, քան՝ այս հինգ՝ դրամներունը: Այս երեւոյթը մեզի վարմանք կը պատճառէ, որովհետեւ հակառակը կ'ա-  
կընկալէինք: Քանի որ Արտաւազդ Ա.՝ Տիրան-Տիգրան Ա.էն առաջ  
գահակալած է, ուստի այս դրամները պէտք է պատկանին Արտաւազդ  
անունով այլ արքայի մը, որ աւելի ուշ գահակալած պիտի ըլլայ, քան՝  
Տիրան-Տիգրան Ա.ը: Դրամագիտական նորագոյն տուեալներուն հա-  
մաձայն, խնդրոյ առարկայ դրամներուն ամենահաւանական թեկնա-  
ծուն կը նկատենք Արտաւազդ Գ.ը:

#### ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Մեր քննարկումները պիտի կատարենք առարկայական մօտե-  
ցումով, եւ որպէս վերլուծումի եղանակ պիտի հետեւինք մեկուսա-  
ցումի (elimination) եղանակին: Նախ խօսինք չորս Արտաւազդներուն  
մասին, միանգամայն ցուցաբերելով անոնց դրամներուն առանձնա-  
յատկութիւնները, որոնք կրնան վճռական դեր խաղալ մեր վերա-  
գրումներու փորձին մէջ:

Ա) Արտաւազդ Ա.: Հակառակ այն իրողութեան որ ան երեսուն  
եօթը տարիներ գահակալած է, ցարդ ոչ մէկ դրամ գոյութիւն ունի, զոր  
կարենանք վստահօրէն վերագրել իրեն:

Բ) Արտաւազդ Բ.: Որդին եւ յաջորդը Տիգրան Բ.ի: Հակառակ  
անոր որ Արտաւազդ Բ. գահակալած է քսաներկու տարիներ, անոր  
դրամահատութիւնը ճոխ չէ: Ան թողարկած է արծաթ, պղինձ եւ փոքր  
թիւով անագապղինձ դրամներ, որոնցմէ շուրջ վաթսունը յայտնաբեր-  
ուած է ցարդ: Այս արքային դրամները ճանշնալը դիւրին է, որովհե-  
տեւ անոր բոլոր դրամները՝ առանց բացառութեան, կը կրեն «Արքա-  
յից Արքայի Արտաւազդայ» հպարտ պատուանունը (տես՝ նկար թիւ 3):

Ներկայացուած դրամին կշիռն է 16.16 կր., տրամագիծը՝ 3.3  
սմ.:

Նկարագրութիւնը՝

Ա. երես. — Արքային կիսանդրին աջ դարձած՝ հայկական հըն-  
գածայր խոյրով:

Բ. երես. — Յաղթանակը (թեւաւոր հրեշտակ) դէպի ձախ կ'ըն-  
թանայ՝ երկարած ձեռքով թագ մը բռնած: Աջին, դէպի վար՝ ΒΑ-  
ΛΕΩC. ձախին, դէպի վար՝ ΒΑΣΙΛΕΩΝ / ΑΡΤΑΥΑΖΔΟΥ. («Արքայից  
Արքայի՝ Արտաւազդայ»):

Գ) Արտաւազդ Դ.: Նախընտրաբար Արտաւազդ Գ.էն առաջ կը  
խօսինք Արտաւազդ Դ.ի դրամներուն մասին, որպէսզի մեր վերլու-  
ծումներու պարագային գաղափարի յաջորդականութիւնը անընդհատ  
ըլլայ:



Նկ. քիւ 1.

Նկ. քիւ 2.



Նկ. քիւ 3.

Նկ. քիւ 4.



Նկ. քիւ 5.

Նկ. քիւ 6.



Նկ. քիւ 7.



Նկ. քիւ 8.



Նկ. քիւ 9.



Նկ. քիւ 10.



Նկ. քիւ 11.



Նկ. քիւ 12.



Նկ. քիւ 13.

Նկ. քիւ 14.



Նկ. քիւ 15.

Նկ. քիւ 16.



Նկ. քիւ 17.

Նկ. քիւ 18.

Տիգրան Դ. երկու անգամ գահ բարձրացած է: Նախ՝ (Ք.Ա. 8-5 թթ.), եւ ապա՝ (Ք.Ա. 2-Ք.Ե. 1 թթ.): Տիգրան Դ. երկրորդ անգամ գահ կը բարձրանայ Երատոյ թագուհիին հետ: Ըստ պատմագիտական աղբիւրներու՝ Տիգրան Դ.ի երկրորդ գահակալութիւնը տեւած է Հագիւ երեք տարիներ: Կ'ըսուի թէ ան սպաննուեցաւ հիւսիսէն արշաւող բարբարոս լեռնականներու կողմէ: Ստոյգ չենք գիտեր թէ արքային մահէն ետք Երատոյ թագուհին դեռ որքան ժամանակ գահակալեց: Թէպէտ գիտենք թէ հռոմայեցիք՝ առիթը օգտագործելով, Հայաստանի թագաւոր նշանակեցին Արիոպարզանէսը, որ բնաւ չսիրուեցաւ Հայերէն: Ան շատ կարճ շրջան մը թագաւորեց (Ք.Ե. 2-4 թթ.) եւ իր մահէն ետք՝ անոր յաջորդեց իր որդին՝ Արտաւազդ Դ.: Արտաւազդ Դ. ալ Հայոց հաճելի չթուեցաւ, եւ ժողովուրդը ապստամբելով սպաննեց թագաւորը: Հակառակ որ Արտաւազդ շատ կարճատեւ՝ երկու տարիներու գահակալութիւն մը ունեցաւ, անոր կը վերագրուին մէկ քանի արծաթ եւ պղինձ դրամներ: Արտաւազդ Դ.ի դրամները շատ դիւրին է ճանչնալ, որովհետեւ անոնց՝ ըստ արեւմտեան ոճի թողարկուած ըլլալը բացայայտ է (տես՝ նկար թիւ 4): Նշանաւոր է Արտաւազդ Դ.ին արծաթէ դենարը:

Ներկայացուած դրամին կշիռն է 3.53 կր., տրամագիծը՝ 2.0 սմ.:

Նկարագրութիւնը՝

Ա. երես.— Արտաւազդի գլուխը՝ պսակով, աջ դարձած: Շուրջանակի մակագրութիւն, ձախէն աջ՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ («Արքայից Մեծի Արտաւազդայ»):

Բ. երես.— Օգոստոս կայսրին գլուխը՝ դափնեպսակով, աջ դարձած: Շուրջանակի մակագրութիւն, ձախէն աջ՝ ΘΕΟΥ ΚΑΙΣΑΡΟΣ ΕΥΕΡΓΕΤΟΥ. («Աստուծոյ Կայսերական Բարերարի»):

Արտաւազդ Դ. ոչ Հայ էր, ոչ Արտաշէսեան: Նոյնը կը հաստատեն անոր առանց խոյրի գլուխը եւ շուրջանակի մակագրութիւնը:

Դ) Արտաւազդ Գ.: Ժորժ Լը Ռիտըր 1960 թ.ին հետաքրքրական յօդուած մը ստորագրեց, որ կը խօսի 39 գանազան դրամներէ բաղկացած գտածոյի մը մասին: Մեզի համար հետաքրքրականը այն է, որ Լը Ռիտըր այս դրամներէն մէկը<sup>3</sup> կը վերագրէ Տիգրան Բ.ի (տես՝ նկար թիւ 5): Ներկայացուած դրամին կշիռն է 4.78 կր., տրամագիծը՝ 1.9 սմ.): Եթէ իր տուած գահակալութեան թուականը նկատի առնենք, գահակալը պէտք է ըլլայ Տիգրան Գ. եւ ոչ թէ Տիգրան Բ.:

3- Georges Le Rider, *Monnaies Grecques Acquisées Par le Cabinet des Médailles en 1959*, Paris, 1960 (Extrait de la «Revue Numismatique», 1959-1960, pp. 7-35), p. 28 et pl. III no. 35.

Պտուկեան՝ հաւանարար Լը Ռիտըրի վերծանումին հաւատք ըն-  
 ծայելով, նոյն դրամը հրատարակեց՝ զայն վերագրելով Տիգրան Դ-ի<sup>4</sup>։  
 Մենք ալ Պտուկեանի գիրքէն օգտուելով զայն հրատարակեցինք որպէս  
 Տիգրան Դ-ի հազուադիւտ դրամ մը<sup>5</sup>։ Պտուկեան՝ հետագային նոյն  
 դրամին այլ տարբերակները ստանալով, զահակալին անունը «Արտա-  
 ւազդ» կը վերծանէ եւ զայն կը վերագրէ Արտաւազդ Գ-ի<sup>6</sup> (տես՝ նկար  
 թիւ 6: Ներկայացուած դրամին կշիռն է 5.20 կր., տրամագիծը՝ 2.0  
 սմ.): Նոյն տեսակէտը շատ աւելի որոշ եւ վաւերական դարձաւ, երբ  
 Պտուկեան վերջերս վեց օրինակներ յիշատակեց (տես՝ նկար թիւ 7:  
 Ներկայացուած դրամին կշիռն է 5.40 կր., տրամագիծը՝ 1.8 սմ.) իր  
 մեծարժէք աշխատասիրութեան մէջ<sup>7</sup>։ Վերջին տարիներուն մեծ թիւով  
 արտաշէսեան դրամներ ստացանք, որոնց մէջ այս դրամէն եօթը օրի-  
 նակներ կան<sup>8</sup>, եւ նոյն տեսակէտը կը փաստեն։ Դրամագէտ Պ. Մուշեղ-  
 եան, վերջերս հրատարակեց մեծածաւալ եւ բովանդակալից դրամագի-  
 տական հատոր մը, որուն մէջ, Լը Ռիտըրին յօդուածէն օգտուելով, այս  
 դրամին օրինակներէն մէկը կը վերագրէ Տիգրան Դ-ի<sup>9</sup>։ Իսկ Պտուկ-  
 եանի յօդուածին մէջ ներկայացուած օրինակը՝ Արտաւազդ Գ-ի<sup>10</sup>։ Վե-  
 րագրումներու եւ վերծանումներու այս տարակարծութիւններուն մե-  
 ծագոյն պատճառը ինդրոյ առարկայ դրամներուն մաշած կամ անորոշ  
 ֆիզիքական վիճակն է։ Ստորեւ կու տանք այս դրամներուն վերծանու-  
 մը, հետեւողութեամբ Պտուկեանի։

4. Զարեհ Պտուկեան, *Արտաշէսեան Հարստութեան Դրամները*, Վիեննա, 1969, էջ 57-58 եւ տախտակ 5, նկ. թիւ 33:

5. Ա. Յ. Տօնապետեան, *Արտաշէսեան Հարստութեան Վերջին Գահակալներուն Դրամները*, «Հայկագեան Հայագիտական Հանդէս», [Ա. հտր.] Պէյրութ, 1970, էջ 83 եւ տախտակ Ա., նկ. թիւ 2:

6. P. Bedoukian, *Coinage of the Later Artaxiads*, «The American Numismatic Society, Museum Notes», No. 17, New York, 1971, p. 138 and pl. XXXV, No. 4, 5a.

7. Paul Z. Bedoukian, *Coinage of the Artaxiads of Armenia*, London, 1978, p. 75 and pl. 8, No. 160.

8. Տես՝ նկար թիւ 12-18: Ներկայացուած դրամներուն կշիռն ու տրամագիծը՝

Նկ. 12— կշիռ՝ 4.10 կր., տրամագիծ՝ 1.60 սմ.

Նկ. 13— կշիռ՝ 4.21 կր., տրամագիծ՝ 1.90 սմ.

Նկ. 14— կշիռ՝ 4.28 կր., տրամագիծ՝ 1.70 սմ.

Նկ. 15— կշիռ՝ 4.50 կր., տրամագիծ՝ 1.90 սմ.

Նկ. 16— կշիռ՝ 4.70 կր., տրամագիծ՝ 1.70 սմ.

Նկ. 17— կշիռ՝ 5.12 կր., տրամագիծ՝ 2.00 սմ.

Նկ. 18— կշիռ՝ 5.14 կր., տրամագիծ՝ 1.80 սմ.:

9. Պ. Ա. Մուշեղեան, *Դրամական Շրջանառութիւնը Հայաստանում*, Երեւան, 1983, էջ 61-62 եւ Աղիւսակներ՝ նկ. թիւ 86:

10. Նոյնը, էջ 64 եւ Աղիւսակներ՝ նկ. թիւ 94:

Ա. երես. — Արտաւազդին գլուխը աջ դարձած՝ հայկական խոյ-  
րով, որուն կեդրոնը խոշոր աստղ մը կը տեսնուի:

Բ. երես. — Անձ մը (Աթենա) կայնած դէպի ձախ, աջ ձեռքով  
երկար նիզակ մը բռնած, իսկ ձախ ձեռքը յենած վահանի մը վրայ:

Յարդ մեզի ծանօթ Բ. երեսը Աթենասի պատկերով պղինձ դրամ-  
ներուն թիւը տասներեքի կը հասնի, որոնցմէ հինգը մաս կը կազմեն  
Պտուկեանի հաւաքածոյին, եօթը՝ մեր, եւ մէկն ալ՝ Բարիզի Շքաղը-  
րամներու Բաժանմունքին: Նկատի առնելով Արտաւազդ անունով չորս  
արքաներուն պատմական եւ դրամագիտական տուեալները, Պտուկ-  
եանին վերագրուած շատ տրամաբանական կը գտնենք:

Այժմ վերադառնանք մեր առաջնահերթ հարցին. այն հինգ  
պղինձ դրամները, որոնց Բ. երեսը՝ լերան վրայ արծիւ թառած կը  
տեսնենք, ո՞ր մէկ Արտաւազդին պէտք է վերագրել: Եթէ քննական  
բաղդատութիւն մը ընենք այս երկու տիպի դրամներուն՝ յարադրելով  
(juxtapose) զանոնք, Ա. երեսները դէպի դուրս, իսկոյն պիտի նկա-  
տենք որ անոնց ունեցած հասարակաց նմանութիւնները բացայայտ են  
եւ աչքառու: Արքաներուն խոյրերուն եւ դէմքերուն նմանութիւնը  
ուշագրաւ է. հաւասարապէս կը տեսնուին երկար երես, թեթեւ մօրուք,  
տափակ քիթ, երկար եւ կոր կզակ, «Դէմքի տխուր արտայայտութիւն»:  
Այլ յատկանշական կէտ մը, որ արժանի է յիշատակութեան, դրամնե-  
րուն կերտուածքն է: Այս դրամներուն միջին կշիռը 4-5 կրամի շուրջ է,  
արհեստագիտութիւնը (craftsmanship)՝ ցածորակ, եւ թողարկումը՝  
անյաջող: Նմանապէս յատկանշական են տառերուն տիպն ու չափը, եւ  
մակագրութիւններուն ու պատուանուններուն յար եւ նման ըլլալը:  
Նաեւ վճռական դեր ունին դրամներու թիւը, ճոխութիւնը եւ մետաղը:  
Արտաւազդ Գ., որ մօտաւորապէս երեք տարիներ զահակալած է, տրա-  
մաբանական է որ միայն երկու տարբեր պատկերատիպերով պղինձ դը-  
րամներ թողարկած ըլլար: Ուրեմն՝ զանազան տուեալներ եւ կարելի-  
ութիւններ նկատի առած, այժմ՝ ամենէն աւելի հաւանական կը նկա-  
տենք որ այս դրամները թողարկուած ըլլան Արտաւազդ Գ.ի կողմէ:  
Եթէ նոյնիսկ այս դրամները հետագային ուրիշ Արտաւազդի մը վերա-  
գրուին, անոնք բոլորն ալ պէտք է վերագրուին նոյն արքային:

**THE COINS OF ARTAVASTES III****ASBED DONABEDIAN****(Summary)**

It is rather surprising that hitherto no coins have been assigned with certainty to the founder of the Artaxiad Dynasty, Artaxias I. The same holds true for his son and successor Artavastes I. However, previously the author has attributed a coin to Artaxias I with hesitation; it could also possibly be assigned to Artavastes I. After a decade of new numismatic finds and progress, the name of the monarch in question has turned out to be not Artaxias after all. On the light of the most recent numismatic findings, the author is convinced that the coins bearing on their reverse an eagle perching on the top of a steep hill should be attributed to Artavastes III.